ՀՈՒՍՏԻՆՈՍ ՎԿԱ

Ա. ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱՄ ԱՆՏՈՆԻՈՍ ԲԱՐԵՊԱՇՏԻՆ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ[1]

Ա. Տիտոս Էլիաս Ադրիանոս Անտոնիոս Բարեպաշտ Ավգոստոս Կեսարին[2] եւ նրա որդի Վերոս փիլիսոփային եւ Լուկիոս փիլիսոփային[3]՝ Կեսարի հարազատ որդուն եւ Բարեպաշտի որդեգրած զավակին, գիտությունների սիրահարին եւ սրբազան ծերակույտին ու ողջ հռոմեական ժողովրդին, որոնց դիմում եմ իմ խոսքով եւ խնդրագրով՝ ի պաշտպանություն բոլոր ժողովուրդների մարդկանց՝ հանիրավի ատված ու հալածված, ի թիվս որոնց նաեւ ինձ՝ Հուստինոսին՝ Պրիսկաի որդուն, Բաքոսի թոռանը, որոնք սերում են ասորական Պաղեստինի փլաբոսյան Նապլուս [քաղաքից]։

Բ. Իրապես բարեպաշտ եւ իմաստասեր մարդիկ պիտի հարգեն ու սիրեն միմիայն ճշմարտությունն ու հրաժարվեն նախնիների կարծիքներին անսալուց, եթե դրանք հոռի են. այսպիսին պիտի լինի բանականությամբ թելադրվող պարտականությունը։ Եւ այս ողջամտությունը պահանջում է ոչ միայն չհետեւել անարդարացի վարվողներին կամ սուտ բաներ ուսուցանողներին, այլեւ ճշմարտության նվիրյալը պիտի ըստ ամենայնի եւ սեփական կյանքից առավել ջանա հետեւել արդարությանը՝ բանիվ եւ գոր-

---

[1] Սույն աշխատությունը թարգմանվել է հետեւյալ հրատարակությունից՝* «Сочиненія святаго Іустина философа и мученика», Москва, 1892, *էջ 31—104։ Հայերենի թարգմանչի ծանոթագրությունները հետայսու կտրվեն կարգային համարի հետ դրված աստղանիշով։*

[2] Անտոնիոս Պիոս (86—161 թթ.) — Հռոմեական կայսր 138 թվից, որի անունով է կոչվում Անտոնիոսների հարստությունը։*

[3] Եւսեբիոսն իր Եկեղեցական պատմության մեջ (գիրք Դ., 12) բերում է Ս. Հուստինոսի այս ջատագովության սկիզբը, բայց φιλοσόφῳ-ի *փոխարեն ընթերցում* φιλοσόφου *եւ հետեւյալ բացատրությունը տալիս. «Լուկիոս փիլիսոփային՝ Կեսարի հարազատ որդուն» սույն արտահայտությունը վերագրելով Լուկիոս Էլիաս Վերոսին՝ ջատագովական երկում հիշատակված Լուկիոսի հորն ու Կեսարին։ Լուկիոս հայրը կայսր Ադրիանոսի սիրելին էր՝ նշանակված որպես գահի թագաժառանգ, եւ Կեսարի տիտղոս ուներ, սակայն մահանում է նախքան Ադրիանոսը։ Լուկիոս որդին որդեգրվում է Անտոնիոս Բարեպաշտի կողմից եւ նրա տիրապետության օրոք սոսկ մասնավոր անձ էր, իսկ կայսեր մահից հետո կայսր Մարկոս Ավրելիոսի հետ համատիրակալ՝ միասին գահակալող անձ։*

ծով՝ մինչեւ իսկ մահվան սպառնալիքի ներքո: Դուք, որ բարեպաշտներ եւ փիլիսոփաներ եք կոչվում եւ ամենուր գիտությունների հովանավորների համբավ վայելում, հիմա կպարզվի՝ արդյոք իրականում այդպիսին եք: Ձեզ սույն գրությամբ դիմում ենք ոչ թե քծնելու կամ հաճոյախոսելու համար, այլ պահանջելու, որ մեզ խիստ եւ մանրազնին քննությամբ դատեք, այլ ոչ թե նախապաշարմունքով առաջնորդվելով կամ անոտիապաշտ մարդկանց առաջ հաճկատարությամբ. որ չտրվեք անմիտ պոռթկումների կամ հնուց անտի ձեզանում տարածում գտած հոռի ասեկոսեների: Այսու սոսկ ինքներդ ձեր դեմ դատավճիռ կարդացած կլինեք: Իսկ ինչ վերաբերում է մեզ, ապա համոզված ենք, որ եւ ոչ մեկից չենք հանդուրժի չարիքը, եթե մեր չար գործերը չբացահայտեն եւ չապացուցեն, որ մենք անպիտան մարդիկ ենք. դուք կարող եք սպանել մեզ, բայց վնասել՝ ոչ:

Գ. Եւ որ այս խոսքերը որեւիցե մեկին անմիտ ու հանդուգն չթվան, խնդրում ենք քննել, թե ինչու են նրանց[4] ամբաստանում, իսկ եթե մեղադրանքներն իրական լինեն, թող պատժեն նրանց, ինչպես որ հարկն է[5]: Իսկ թե որեւիցե մեկը որեւիցե բանում ի զորու չլինի հաստատելու իր մեղադրանքը, ապա ողջամտությանը դեմ է սոսկ ասեկոսեների հիմամբ վիրավորել անմեղ մարդկանց կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ ինքներդ ձեզ, երբ մտադրվում եք ձեր գործերն առաջ տանել ոչ թե իմաստությամբ, այլ կրքով: Ամենայն ողջամիտ մարդ կասի, որ արդարության լավագույն ու միակ պայմանն այն է, որ ամբաստանյալներն իրենց կյանքի եւ ուսմունքի մասին անբասիր հաշվետվություն ներկայացնեն, իսկ քննողները, մյուս կողմից, իրենց դատավճիռները կայացնեն ոչ թե բռնությամբ եւ կամայականորեն, այլ բարեպաշտությամբ եւ իմաստությամբ առաջնորդվելով: Այսպիսով՝ թե՛ վերադասները, թե՛ ստորադասները երջանկություն կվայելեին: Արդ, հներից մեկը մի տեղ ասել է. «Եթե կառավարողներն ու ժողովուրդները չփիլիսոփայեն, ապա քաղաքացիական հասարակությունները չեն կարող բարօրություն վայելել»[6]: Այսպես

---

[4] *Այսինքն՝ քրիստոնյաներին:*

[5] *Բնագրում այլ բառեր էլ կան՝* μᾶλλον δὲ κολάζειν, *որոնք Մառանը կամենում էր փոխարինել* ἄλλον δε κολάξειν*-ով, այսինքն՝ թող քրիստոնյաներին պատժեն ինչպես հարկն է [պատժել] ոչ քրիստոնյա մեկին, սակայն աստ տեղին չէ* δὲ *մասնիկը: Օտտոն եւ այլք կարծում են, որ այդ բառերը բնագիր են ներմուծվել լուսանցքներից, որոնցում ինչ-որ մի ընթերցող ցանկացել է ուղղել Հուստինոսի արտահայտությունը՝ փոխարինելով բայի կրավորական սեռը ներգործականով: Ուստի մենք թարգմանելիս բաց ենք թողել դրանք:*

[6] Պլատոն, *Պետություն, գր. Ե.:*

ուրեմն, մեր պարտականութիւնն է բոլորի քննութեանը ներկայացնել մեր կեանքն ու վարդապետութիւնը, որպեսզի մեր մասին ոչինչ չիմացողների փոխարեն ինքներս չպատժվենք այն հանցագործութիւնների համար, որոնք որ կուրաբար գործում են այլք: Իսկ ձեր գործը, ինչպես եւ պահանջում է խելամտութիւնը, մեզ ուշադրութեամբ լսելն ու բարի դատավորներ լինելն է, քանզի այս ամենից հետո Աստված ձեզ չի ների, եթե դուք ճշմարտութիւնը ճանաչելով՝ արդար չվարվեք:

Դ. Միմիայն անվան համար, ի բացառեալ անվանն առնչվող գործերը, չի կարելի դատել՝ լավը լինի այն թե վատը: Թեեւ, ասենք, ինչ վերաբերում է մեր անվանը, որի համար մեզ ամբաստանում են, մենք ամենաբարի մարդիկ ենք[7]: Սակայն ինչպես որ արդար չենք համարում, ի բացառեալ այն դեպքերը, երբ մեր գործած հանցանքները բացահայտվում են, ներում խնդրել միմիայն անվան համար, այնպես եւ, մյուս կողմից, եթե պարզվի, որ ո՛չ անվան, ո՛չ կենսակերպի տեսակետից մեղավոր չենք, ապա ձեր գործն է հոգ տանել, որ անմեղ մարդիկ անարդարացիորեն չպատժվեն, եւ ըստ այդմ՝ դուք եւս, համաձայն արդարութեան, պատժի չենթարկվեք: Սոսկ անունը չի կարող լրջմիտ հիմք ծառայել ո՛չ գովեստի, ո՛չ էլ պատժի համար, եթե իրենք՝ գործերը, չվկայեն գովեստի կամ պախարակման արժանի ինչ-ինչ բաներ: Չէ՞ որ դուք էլ ձեր աշխարհում մեղադրյալներից եւ ոչ մեկին չեք պատժում նախքան հանցանքի բացահայտումը, իսկ մեր պարագայում անունն իսկ որպես մեղքի ապացույց եք ընդունում, թեեւ, ասենք, եթե ըստ անվան դատենք, ապա դուք, ավելի շուտ, պիտի դատեք մեզ ամբաստանողներին: Մեզ մեղադրում են այն բանում, որ քրիստոնյաներ ենք, բայց բարին ատելն արդար չէ[8]: Այն էլ ասենք, որ եթե ամբաստանյալներից որեւիցե մեկն ուրանա [իր հավատը] եւ սոսկ ասի, որ ինքը քրիստոնյա չէ, դուք նրան ազատ եք արձակում՝ ասես նրա մեղավորութեան այլեւս որեւէ ապացույց չունենալով:

---

[7] *Հուստինոսը նկատի ունի քրիստոնյաների անունը, որ ինքնին բավական էր, որ հեթանոսները դատապարտեին հավատացյալներին, ինչը, սակայն, ըստ իր կարծիքի, նրանց մեջ բարի մարդկանց (κρηστότατοι) տեսնելու պատեհություն էր ընձեռում: Աստ Հուստինոսն օգտվում է χρίστός եւ κρηστός բառերի հնչյունների նմանությունից, որոնք հենց այդ պատճառով էլ հաճախ էին փոխս գցում հեթանոսները: Տե՛ս* Տերտուղիանոս, *Առ հեթանոսս, գր. Ա., գլ. Գ.:*

[8] *Տե՛ս 7-րդ ծանոթագրությունը: Նկատենք, որ ինքը՝ Հուստինոսը գիտեր «քրիստոնյա» բառի իսկական նշանակությունը, ինչպես երեւում է Ա. Ջատագովություն, գլ. ԺԲ.-ից եւ Բ. Ջատագովություն, գլ. Զ.-ից:*

Իսկ եթե ոմն մեկը հաստատի իր քրիստոնյա լինելը, դուք նրան պատժում եք միմիայն այդ խոստովանության համար, այնինչ հարկ կար քննելու թե՛ իրեն քրիստոնյա խոստովանածի կյանքը, թե՛ ուրացածի, որպեսզի գործերից իսկ պարզվի, թե ովքեր են թե՛ մեկը, թե՛ մյուսը։ Արդ, ինչպես որ ոմանք, իրենց ուսուցիչ Քրիստոսից չուրանալու պատվիրան ստանալով, իրենց հաստատակամությամբ կտտանքների ընթացքում որպես քաջալերիչ օրինակ են ծառայում այլոց համար, այնպես էլ ուրիշները՝ ոչ բարեպաշտ կյանքով ապրողները, կարող է պատահել, նախապաշարված մարդկանց առիթ են տալիս բոլոր քրիստոնյաներին ամբարշտության եւ անօրենության մեջ մեղադրելու։ Դա, սակայն, արդար չէ։ Փիլիսոփաների անունն ու պատմուճանը կրողների մեջ կան նաեւ այնպիսի մարդիկ, որոնք իրենց կոչմանը հարիր ոչինչ էլ չեն անում. եւ դուք նույնպես գիտեք, որ հին ուսուցիչները, իրենց գաղափարների ու ուսմունքների ողջ հակադրությամբ հանդերձ, կոչվում են այդ նույն փիլիսոփա[9] անունով, ընդ որում՝ նրանցից ոմանք անաստվածություն էին սովորեցնում։ Բանաստեղծները եւս պատմում են Զեւսի եւ նրա զավակների անառակությունների մասին, իսկ այդ հեքիաթներով զբաղվողներին դուք ոչ միայն չեք պապանձեցնում, այլեւ, ընդհակառակը, նրանց, ովքեր վարպետորեն ծաղրուծանակի են ենթարկում ձեր աստվածներին, դեռ պարգեւների ու պատիվների եք արժանացնում։

Ե. *Արդ, ինչ է դա նշանակում։ Մենք [ի լուր ամենքի] հայտարարում ենք, որ ոչ մի հանցավոր բան չենք անում եւ չենք հետեւում այդօրինակ անաստված ուսմունքների, իսկ դուք ոչ միայն դատական քննություն չեք նշանակում, այլեւ անխոհեմ կրքի ներգործությամբ եւ չար այսերի հրահրմամբ մեզ մահապատժի եք ենթարկում՝ առանց խորհրդածելու ու անհոգ կերպով։ Հարկ է, սակայն, ճշմարտությունն ասել։ Դեռ հին ժամանակներում չար այսերը, բացահայտ երեւան գալով, պղծում էին կանանց ու պատանիներին եւ մարդկանց ահ ու սարսափի մատնում, այնպես որ ովքեր չէին խորհրդածում դրանց գործողությունների մասին՝ վախով բռնված եւ անգիտանալով, որ դրանք չար այսեր են, դրանց աստվածներ էին անվանում եւ տալիս նրանց այնպիսի անուններ, որոնք որ դեւերն էին իրենք իրենց համար ընտրում։ Սակայն երբ Սոկրատեսը որոշեց բացահայտել այդ իրողությունը՝ ուղիղ դատողությամբ եւ քննությամբ*

[9] *Տե՛ս ստորեւ՝ գլուխ է.,* Աթենագորաս, *գլ. Բ.,* Տերտուղիանոս, *Առ հեթանոսս, գր. Ա., գլ. Ե.։*

առաջնորդվելով, եւ մարդկանց հեռացնել դեւերից, այդժամ դեւերն օգտվեցին չարով բռնված մարդկանց ծառայությունից, եւ նրանց միջոցով Սոկրատեսը մահվան դատապարտվեց՝ իբրեւ անաստված եւ ամբարիշտ, այն պատրվակով, թե իբր նոր չաստվածների պաշտամունք է ներմուծում: Նույն կերպ էլ գործում են ընդդեմ մեզ: Ընդ որում, այդ ամենը Բանը ոչ միայն բացահայտեց հելլեննների մեջ Սոկրատեսի միջոցով, այլեւ բարբարոս ժողովուրդների մեջ՝ հենց Իր՝ Բանի միջոցով, Որ տեսանելի կերպարանք առավ, մարդացավ եւ Հիսուս Քրիստոս կոչվեց: Հավատալով Բանին՝ մենք ասում ենք, որ այսպիսի գործեր անող ոգիները ոչ միայն բարի չեն, այլեւ չար ու ամբարիշտ դեւեր են, որոնք իրենց գործերով չեն կարող համեմատվել նույնիսկ առաքինություն սիրող մարդկանց հետ:

Ջ. Այդ իսկ պատճառով մեզ անաստվածներ են անվանում: Խոստովանենք, որ մենք անաստվածներ ենք միայն այդպիսի սուտ աստվածների հանդեպ, բայց ոչ ճշմարիտ Աստծու՝ արդարության եւ ողջախոհության ու այլ առաքինությունների Հոր նկատմամբ, Որը զերծ է ամենայն չարից: Մենք պաշտում ու երկրպագում ենք ինչպես Նրան, այնպես եւ Նրանից եկած եւ մեզ այս ուսմունքն ավանդած Որդուն, Նրան հետեւող եւ Նրան նմանվող բարի հրեշտակների[10] զինվորության հետ միասին, ինչպես նաեւ պաշտում ու երկրպագում ենք մարգարեական Հոգուն՝ խոսքով եւ ճշմարտությամբ մեծարելով Նրան եւ բացահայտ քարոզելով այդ ամենը յուրաքանչյուրին, ով ցանկություն ունի սովորելու այն, ինչ մենք ենք սովորել:

Է. Բայց կասեն. չէ՞ որ հարցաքննության ենթարկվածներից ոմանք իրապես հանցագործներ էին: Ճիշտ է՝ դուք շատերին եւ հաճախ եք դատապարտում, հենց որ քննում եք մեղադրյալների կյանքը, բայց ոչ այն պատճառով, որ նրանցից առաջ ուրիշները եւս մերկացվել էին: Առհասարակ ընդունում ենք, որ ինչպես հելլեննների մեջ, թեպետ ամեն մեկը յուրովի, իրենց ուսուցումները տարածած այրերը նույն փիլիսոփա անունով են կոչվում, եւ թեպետ նրանց ուսմունքները հակասում էին մեկը մյուսին, այդպես էլ բարբարոսների մեջ նույն ընդհանուր անունը

[10] *Խոսելով Աստծու Որդու մասին՝ Հուստինոսը, իմիջիայլոց, հիշատակում է նաեւ այլ հրեշտակների, որովհետեւ նա Աստծու Որդուն ներկայացնում ու անվանում էր հրեշտակ («Երկխոսություն Տրիփոնի հետ», գլ. ՂԳ., ՃԻԷ.) ոչ թե ըստ բնության, այլ ըստ Նրա՝ մարդկային ցեղին մատուցած ծառայության, ինչպես դա երեւում է Տրիփոնի հետ զրույցից, գլ. ՃԷ.:*

տրվում է եւ նրանց, ովքեր ճշմարտապես իմաստուններ են, եւ նրանց, ովքեր լոկ ներկայացնում են իրենց իբրեւ այդպիսիք. սրանք բոլորն էլ քրիստոնյաներ են կոչվում: Ուստի եւ խնդրում ենք, որ գաղտնի ամբաստանության՝ մատնագրի զոհ դարձածներին դատեք ըստ իրենց գործերի, որպեսզի հանցանք գործածը պատժվի իբրեւ հանցագործ, այլ ոչ թե իբրեւ քրիստոնյա. իսկ եթե ոմն մեկն անմեղ լինի, թող ազատ արձակվի իբրեւ ոչ մի վատ բան չարած քրիստոնյա: Մենք չենք էլ խնդրում մեղադրողներին պատժել, քանզի նրանց գլխին սեփական անարդարությունն ու ճշմարտության անգիտությունն արդեն իսկ տեղով մեկ պատիժ են:

Ը. Խորամո՛ւխ եղեք. մենք դա ձեր իսկ բարիքի համար ենք ասում. չէ՞ որ կարող ենք հարցաքննության ժամանակ ուրանալ, սակայն չենք ուզում խաբեությամբ ապրել: Մենք հավիտենական եւ մաքրամաքուր կյանք ենք փափագում, ձգտում ենք բնակվել Աստծու՝ բովանդակ աշխարհի Հոր ու Արարչի հետ եւ շտապում ենք դավանել մեր հավատը՝ հավատալով եւ համոզված լինելով առ այն, որ այսպիսի պարգեւի կարող են արժանանալ նրանք, ովքեր իրենց գործերով Աստծու առաջ վկայել են իրենց հավատարմությունը՝ Նրան ծառայելով, եւ իրենց սերը՝ Նրա հետ կյանքի նկատմամբ, որը չարի համար անմատչելի: Ահա հակիրճ խոսքերով այն, ինչ մենք սպասում ենք, ինչ սովորել ենք Քրիստոսից եւ ինչ ուսուցանում ենք: Այն, ինչ Պլատոնն էր ասում, որ մեղավորները կանգնելու են Հռադամանթիսի եւ Մինոսի[11] դատաստանի առաջ եւ նրանց ձեռամբ էլ պատժվելու, նույնը եւ պնդում ենք մենք, բայց, ըստ մեզ, դատավորը Քրիստոսն է լինելու, իսկ հոգիները միավորվելու են իրենց նույն մարմինների հետ եւ հավիտենական տանջանքների մատնվելու, բայց ոչ հազար տարի, ինչպես ասում էր Պլատոնը: Իսկ թե ոմն մեկը մեզ ասի, թե դա անհավանական ու անհնարին բան է, ապա դա, համենայն դեպս, [ընդամենը] մոլորություն է առանց լուրջ հետեւանքների[12], քանի դեռ մենք չենք բռնվել ինչ-որ մի հանցագործության մեջ:

---

[11] Ըստ հունական առասպելաբանության՝ այս եղբայրները՝ Զեւսի եւ Եւրոպեի որդիները, Տարտարոսում՝ դժոխքում, պատժելու են մեղավոր հոգիներին:*

[12] Ոմանց մեկնությամբ այս πλάνη ἐστὶν ἄλλου πρὸς ἕτερον*-ը նույնն է, ինչ* πλάνη ἀλλοπρόσαλλος*-ը՝ սովորական, առօրեական սխալ, որն ամեն մեկն էլ դյուրությամբ կարող է գտնել նաեւ նրա մեջ, ով սխալի համար հանդիմանելու մտադրություն կունենար: Անգլիացի գիտնական Տիրլբին կարդում է.* προς ἡμᾶς ἤδε ἡ πλάνη ἐστιν, ἀλλ᾽ οὐ προς ἕτερον*, այսինքն՝ սխալը վերաբերում է մեզ, բայց ոչ մեկ ուրիշի:*

Թ. Մենք բազում զոհեր չենք մատուցում, ծաղկեպսակներ չենք հյուսում ի պատիվ նրանց, ովքեր, մարդկանց ձեռքի գործ լինելով եւ տաճարներում դրվելով, աստվածներ են կոչվում, քանզի գիտենք, որ անհոգի ու մեռյալ են եւ Աստծու պատկերը չեն կրում (մենք չենք կարծում, որ Աստված նմանվեր այդ պատկերներին, որոնք, ասում են, Նրան պաշտելու համար են ի ցույց դրել)։ Բայց դրանք անուններ եւ չար դեւերի տեսք ունեն, որոնցով հայտնվել են մարդկանց։ Արդյոք կարիք կա՞ ձեզ ասելու, երբ ինքներդ էլ գիտեք, թե ինչպես են արվեստագործները մշակում նյութը, հղկում ու քանդակում, ձուլում ու կռում, եւ հաճախ անպիտան անոթներից, արվեստագործությամբ միայն տեսքը փոխելով ու պատկերի մեջ առնելով, ստեղծում են այն, ինչ չաստվածներ են անվանում։ Ահա թե ինչն ենք մենք համարում ոչ միայն անընդունելի բանականության, այլեւ վիրավորական Աստծու համար, Ով անճառելի փառք եւ պատկեր ունի, մինչդեռ Նրա անունով կնքում են աստվոր եւ մշտական խնամք պահանջող առարկաները։ Դուք նաեւ քաջ գիտեք, որ դրանց վարպետներն անպիտան մարդիկ են եւ, որպեսզի մանրամասնորեն չթվարկենք, բոլոր արատներին անձնատուր եղած. նրանք նույնիսկ այլասերում են աշխատանքներում իրենց օգնող աղախիններին։ Ինչ խեղճություն։ Անառակ մարդիկ պաշտամունքի համար չաստվածներ են կերտում ու վերակերտում. եւ այսպիսի մարդիկ պահապաններ են կարգվում մեհյաններում, ուր որ զետեղված են աստվածները, չնայած որ պիղծ բան է մտածելն ու ասելը, որ մարդիկ աստվածների պահապաններ են կարգվում[13]։

Ժ. Իսկ մեզ ավանդված է, որ Աստված մարդկանց նյութեղեն նվիրաբերությունների կարիքը չունի. Նա, ինչպես տեսնում ենք, Ինքն է մեզ ամեն ինչ տալիս։ Մենք սովորել ենք, համոզված ենք ու հավատում ենք, որ Աստծուն հաճո են միայն նրանք, ովքեր ընդօրինակում են Իրեն Իր իսկ կատարելություններում՝ ողջախոհության, արդարության եւ մարդասիրության մեջ, ինչպես եւ այն ամենում, ինչ վայել է Նրան, Ով որեւիցե որոշակի անունով չի անվանվում։ Մենք նույնպես գիտենք, որ Նա Իր բարությամբ ի սկզբանե մարդկանց համար ամեն ինչ ստեղծեց անձեւ նյութից, եւ որ մարդիկ, եթե իրենց գործերով արժանի լինեն Նրան, կարժանանան Նրա հետ բնակվելու եւ Նրա հետ թագավորելու՝ զերծ ապականությունից ու տվայտանքներից։ Արդ, ինչպես որ Նա ի սկզբանե, երբ

[13] *Տե՛ս Բարուք Ջ. 17։*

դեռ գոյություն չունեինք, ստեղծեց մեզ, նույն կերպ էլ, կարծում ենք, որ նրանց, ովքեր ընտրեցին ապրել Նրան հաճո կյանքով, կարժանացնի այդ ընտրության համար հավերժության եւ Իր հետ բնակվելու: Որ ի սկզբանե ենք ստեղծվել, դա մեր գործը չէր, բայց որպեսզի ընտրեինք Նրան հաճո կյանքին հետեւելը, Նա մեզ շնորհված բանական ունակությունների միջոցով համոզում է մեզ ու բերում հավատի: Ինձ թվում է, որ բոլոր մարդկանց համար կարեւոր է այն, որ նրանց չարգելեն ճանաչել այս վարդապետությունը, այլ դեռ իրենց ուշադրությունը դարձնեն դրա վրա: Արդ, այն, ինչ չէին կարող անել մարդկանց օրենքները, կյանքի կոչած կլիներ Աստծու Խոսքը, եթե չար այսերը՝ յուրաքանչյուր մարդու մեջ բնավորված առ չարը բազում հակումների աջակցությամբ, այդքան շատ սուտ ու անաստված ամբաստանություններ չսերմանեին, որոնցից եւ ոչ մեկը հարիր չէ մեզ:

ԺԱ. *Երբ դուք լսում եք, որ մենք ինչ-որ թագավորության ակնկալիք ունենք, ապա իզուր եք կարծում, թե մենք խոսում ենք ինչ-որ մարդկային թագավորության մասին, այնինչ մենք խոսում ենք Աստծու հետ թագավորելու մասին: Դա պարզ երեւում է այն բանից, որ երբ հարցաքննում եք մեզ, մենք ինքներս ենք խոստովանում, որ քրիստոնյաներ ենք, թեեւ գիտենք, որ այդ բանը խոստովանող ամենայն մարդու մահապատիժ է սահմանված: Եթե մենք մարդկային թագավորության սպասեինք, ապա կուրանայինք, որպեսզի խույս տայինք մահից, կամ կջանայինք թաքնվել սպասվածին հասու լինելու համար: Բայց քանի որ մեր հույսերը ներկային չեն միտված, ապա չենք անհանգստանում, երբ մեզ սպանում են՝ իմանալով, որ բոլորն էլ անխուսափելիորեն պիտի մահանան:*

ԺԲ. *Ինչ վերաբերում է հասարակական խաղաղությանը, ապա այդ բանում մենք ձեզ աջակցում ենք ու մեր նպաստը բերում բոլոր մարդկանցից առավել, քանզի մենք մի այնպիսի ուսմունքի ենք հետամուտ, ըստ որի՝ ոչ մի չարագործ, ինչպես եւ ոչ մի շահամոլ, ոչ մի ոճրագործ, ոչ մի առաքինի մարդ չի կարող թաքնվել Աստծուց, եւ որ յուրաքանչյուրն ըստ իր գործերի որակի հավիտենական տառապանքի կամ փրկության կարժանանա: Եթե բոլոր մարդիկ իմանային այս բանը, ապա ոչ ոք այս կարճ կյանքի համար չարը չէր ընտրի՝ իմանալով, որ կմատնվի հավիտենական կրակի դատապարտությանը, այլ ըստ ամենայնի կզսպեր իրեն եւ առաքինություններով կզարդարվեր, որպեսզի Աստծուց բարիքների արժանանար եւ պատժից խուսափեր: Բանն այն է, որ մարդիկ*

ձեր կողմից հաստատված օրենքների եւ պատժի վախի պատճառով չէ, որ ջանում են թաքցնել իրենց հանցանքները, այլ հանցանքներ գործելով՝ գիտեն, որ կարող են ձեզանից՝ որպես մարդկանցից, թաքնվել: Իսկ եթե իմանային եւ համոզված լինեին առ այն, որ Աստծուց ոչինչ, այսինքն՝ ոչ միայն գործ, այլեւ մտադրություն չի կարելի թաքցնել, ապա, համենայն դեպս, պատժի երկյուղից ըստ ամենայնի կձգտեին լավ պահել իրենց. այս բանում դուք էլ համամիտ կլինեք: Այնինչ, թվում է, կարծես թե դուք վախենում եք, որ բոլորն առաքինի կյանքով ապրեն, եւ դուք այլեւս ոչ մեկին չեք պատժի. սա, սակայն, վայել է դահիճներին, բայց ոչ բարի կառավարչին: Ասենք, ես համոզված եմ, որ սա էլ, ինչպես վերն ասացի, չար դեւերի ձեռքի գործն է, որոնք զոհաբերություն ու ծառայություն են պահանջում բանականությանը հակառակ կյանքով ապրողներից: Բայց ես կարծում եմ, որ դուք՝ բարեպաշտություն ու փիլիսոփայություն սիրողներդ, բանականությանը ներհակ որեւէ բան չեք անի: Իսկ եթե դուք էլ, ինչպես անմիտները, սովորույթները գերադասում եք ճշմարտությունից, ապա արեք, ինչ կզորեք: Կարծիքը ճշմարտությունից գերադասող կառավարիչները նույնքան զորեղ են, ինչքան ավազակները՝ ամայի վայրում: Եւ դուք ձեր գործերում հաջողություն չեք ունենա, ինչպես այդ մասին վկայում է Ինքը՝ Բանը, այն Բանը, Որ Հայր-Աստծուց հետո ամենազորեղն ու ամենաարդարադատն է բոլոր կառավարիչների մեջ: Արդ, ինչպես որ բոլորն էլ հրաժարվում են աղքատություն կամ տառապանք, կամ էլ հայրական անփառունակություն ժառանգելուց, այդպես էլ խոհեմ մարդը չի ընտրի այն, ինչի ընտրությունն արգելում է Բանը: Այն, որ այս ամենը կատարվելու է, պնդում եմ, որ կանխասել է մեր Ուսուցիչը, բոլորի Հոր եւ Տեր Աստծու միաժամանակ Ե՛ւ Որդին, Ե՛ւ պատգամաբերը՝ Հիսուս Քրիստոսը, Որից մեր քրիստոնյա անունն ստացանք: Այդ իսկ պատճառով հաստատակամ ենք այն ամենում, ինչ Նրանից ուսանեցինք, քանզի իրականում կատարվում է այն, ինչ Նա նախապես կանխասել էր. դա էլ հենց Աստծու գործն է, այսինքն՝ ինչ-որ մի իրադարձության մասին կանխասելն ու դրա ճշգրիտ կատարումը՝ ըստ այդ կանխասության: Արդ, ես կարող էի աստ կանգ առնել ու այլեւս ոչինչ չավելացնել այն մտքին, որ մենք արդարություն ու ճշմարտություն ենք հայցում: Բայց քանի որ գիտեմ՝ դյուրին չէ տգիտությամբ բռնվածին հոգով հանկարծակի հեղափոխվելը, ապա որոշեցի եւս մի քանի խոսք հավելել ճշմարտություն սիրողնե-

րի համար՝ իմանալով, որ անհնարին չէ տգիտությունը թոթափելը, երբ ի հայտ կգա ճշմարտությունը։

ԺԳ. Իսկ ողջախոհներից ո՞վ է, որ չի խոստովանի, որ մենք անաստվածներ չենք, երբ պաշտում ենք բովանդակ աշխարհի Արարչին եւ ըստ մեր ուսանած վարդապետության՝ պնդում, որ Նա արյուն, ձոնում[14] ու բուրումնավետ ծխանյութեր չի պահանջում, այլ մենք ըստ կարելվույն փառաբանում ենք Նրան աղոթքի եւ գոհության խոսքերով մեր բոլոր նվիրաբերությունների ընթացքում։ Մենք ուսանել ենք, որ Նրան վայել միակ հարգանքի կերպն այն է, որ Նրա՝ մեզ պարգեւած սնունդը կրակով չոչնչացվի, այլ ծառայի որպես կերակուր մեզ ու կարիքավորների համար, իսկ Նրան երախտագիտության զգացումով մատուցվեն հանդիսավոր արարողությունների գործողություններ ու երգեր[15]՝ այն բանի համար, որ մենք ստեղծվել ենք մեր բարեկեցության բոլոր բարիքների համար, պես-պես արգասիքների, եղանակի փոփոխությունների համար, եւ մեր պաղատանքները երկինք առաքենք՝ անապական [հավերժական] մարմնով հարության առնելու համար՝ ըստ մեր հավատի առ Նա։ Սույնում մեր ուսուցիչը Հիսուս Քրիստոսն է, Որը հենց այդ բանի համար էլ ծնվեց եւ Տիբերիոս կայսեր օրով Պոնտացի Պիղատոսի՝ Հուդայի նախկին կուսակալի [ձեռամբ] խաչվեց։ Մենք գիտենք, որ Նա ճշմարիտ Աստծու Որդին է, եւ Նրան երկրորդ տեղում ենք զետեղում [Հորից հետո], իսկ մարգարեական Հոգուն՝ երրորդ։ Իսկ որ մեր պաշտամունքն առ Նա ճշմարիտ է, ես ձեզ կապացուցեմ։ Մեզ ամբաստանում են խենթության մեջ՝ այն բանի համար, որ անայլայլելի եւ հավիտենական Աստծուց եւ ամենայնի Հորից հետո երկրորդ տեղը տալիս ենք խաչյալ մարդուն՝ անգիտանալով դրանում ամփոփված խորհուրդը։ Ես կշարադրեմ այն ձեզ համար՝ խնդրելով մանրազնին խորամուխ լինել խնդրո առարկայի մեջ։

ԺԴ. Բայց նախապես զգուշացնում են ձեզ, որ դեւերը, որոնց մասին արդեն իսկ վերը խոսել եմ, չգայթակղեցնեն ձեզ եւ չշեղեն ձեր միտքը մեր խոսքերն ընդունելուց ու ըմբռնելուց (Քանզի նրանք ջանում են ձեզ բոլորիդ, ովքեր բավականին հոգ չեն տանում իրենց փրկության մա-

---

[14] Որոշ հեթանոս ազգերի ծիսական արարողություններում կուռքերին, բարի կամ չար ոգիներին մատուցված զոհաբերություն, հիմնականում՝ գինի։*

[15] Ὑμπὰς καὶ ὕμνους — *«Օրհներգ» բառի տակ աստ հասկացվում են ինչպես Դավթի սաղմոսները, այնպես էլ քրիստոնյաների կազմած եւ եկեղեցական ժամերգություններում կիրառվող երգերը։* Ὑμπαί *(թափոր, արարողություններ) բառով աստ, հավանաբար, արտահայտվում են աղոթքի եւ ժամերգությունների արտաքին գործողությունները։*

սին, մերթ երազներով, մերթ մոգական կախարդություններով գերելով, սարկության եւ ծառայության մեջ պահել)։ Մենք նույնպես նրանցից հրաժարվեցինք, հենց որ հավատացինք Բանին, եւ այսօր էլ Որդու միջոցով հետեւում ենք Մի եւ Անեղ Աստծուն։ Մենք, որ նախկինում հաճույք էինք գտնում պոռնկության մեջ, այսօր միայն ողջախոհություն ենք սիրում. մենք, որ առաջ օգտվում էինք կախարդության հնարքներից, այսօր անձնատուր ենք եղել Բարի ու Անեղ Աստծուն. առաջ ամենից շատ հոգ էինք տանում հարստության եւ ունեցվածք ձեռք բերելու մասին, իսկ այսօր մեր ունեցած-չունեցածը տալիս ենք հասարակությանը եւ կիսում ամենայն կարիքավորի հետ. առաջ ատում ու սպանում էինք մեկս մյուսին եւ սովորույթների տարբերության պատճառով չէինք կամենում օգտվել օտարների հետ միեւնույն ակութից, այսօր՝ Քրիստոսի աշխարհ գալուց հետո, ապրում ենք միասին։ Մենք աղոթում ենք մեր թշնամիների համար եւ հանիրավի մեզ ատողներին փորձում ենք համոզել առ այն, որ ապրելով Քրիստոսի փառահեղ օրենքներով՝ անսասան հույս ունենան ամենայնի վրա իշխող Աստծուց մեզ հետ համատեղ նույն բարիքներն ստանալ։ Բայց որպեսզի չմտածեք, որ ես ձեզ պատրում եմ իմ իմաստակություններով, հարմար գտա, նախքան իմ ապացույցները շարադրելը, Քրիստոսի ուսմունքից մի քանի քաղվածք բերել, իսկ դուք՝ զորեղ տիրակալներդ, պիտի քննեք՝ արդյոք մեր ուսումն ու ուսուցանումը ճշմարիտ է։ Նրա ուսուցումները հակիրճ էին ու ոչ ծավալուն, քանզի Նա սոփեստ չէր, իսկ խոսքն օժտված էր Աստծու զորությամբ։

ԺԵ. Ողջախոհության մասին Նա այսպես էր ասում. «Ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում։ Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանի՛ր այն եւ դե՛ն գցիր քեզնից. որովհետեւ քեզ համար լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, եւ քո ամբողջ մարմինը չընկնի գեհեն... եւ ով որ արձակվածին է առնում, շնանում է»[16]։ Դարձյալ. «Կան ներքինիներ, որոնք իրենց մոր որովայնից այդպես են ծնվել. կան ներքինիներ էլ, որոնք մարդկանց կողմից են ներքինի դարձել. ներքինիներ էլ կան, որոնք երկնքի արքայության համար իրենք իրենց ներքինիներ են դարձրել. ով կարող է տանել, թող տանի»[17]։ Ըստ Փրկչի՝ ինչպես երկրորդ անգամ մարդկային

[16] *Մատթ. ե. 28–32։*

[17] *Մատթ. ԺԹ. 12։*

օրենքով ամուսնացողները, այնպես էլ կնոջը ցանկությամբ նայողները մեղանչում են[18]: Քանզի Նրա կողմից մերժվում է ոչ միայն նա, ով գործով է պոռնկանում, այլեւ նա, ով կամենում է պոռնկանալ, քանի որ Աստծուն հայտնի են ոչ միայն գործերը, այլեւ խորհուրդները: Վաթսունյոթանասուն տարեկան բազում այրեր ու կանայք կան, որոնք, մանկուց աշակերտելով Քրիստոսին, ապրում են կուսության մեջ, եւ ես պատրաստ եմ այդպիսիներին ցույց տալ ամեն ժողովրդի մեջ: Արդյոք կարիք կա՞ խոսելու անթիվ-անհամար մարդկանց մասին, որոնք անառակությունից հետ են կանգնել եւ սովորել են ողջախոհ կյանքով ապրել: Քրիստոսը ոչ թե արդարներին ու ողջախոհներին էր ապաշխարության կանչում, այլ ամբարիշտներին, անժուժներին եւ մեղավորներին: Այսպես՝ հենց Ինքն էր ասում. «Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ մեղավորներին»[19]: Քանզի երկնային Հայրը մեղավորի ապաշխարությունն է կամենում, այլ ոչ թե նրա տառապանքները: Իսկ բոլորին սիրելու մասին Նա այսպես էր ուսուցանում. «Եթե սիրեք միմիայն նրանց, ովքեր ձեզ սիրում են. ձեր վարձն ի՞նչ է... չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում: Իսկ ես ասում եմ ձեզ. սիրեցե՛ք ձեր թշնամիներին, բարությո՛ւն արեք ձեզ ատողներին[20], օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, ձեզ նեղողների համար աղոթեցե՛ք»[21]: Իսկ կարիքավորի հետ իր ունեցածը կիսելու եւ ոչինչ հանուն պարծենալու չանելու մասին Նա այսպես է ասում. «Տո՛ւր նրան, ով քեզնից խնդրում է. եւ ով կամենում է քեզնից փոխ առնել, երես մի՛ դարձրու նրանից»[22]: «Եւ եթե փոխ եք տալիս նրանց, ումից հետ առնելու ակնկալություն ունեք, ո՞րն է ձեր արած շնորհը, որովհետեւ մեղավորներն էլ են փոխ տալիս մեղավորներին, որպեսզի նույն չափով հետ առնեն»[23]: «Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց ու ժանգ ոչնչացնում են, եւ ուր գողերը պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց եւ ո՛չ

[18] Διγαμιας — *Ըստ Մառանի՝ Հուստինոսի սույն խոսքը ոչ թե երկրորդ ամուսնություն է նշանակում, քանի որ նրա բերած մեջբերումներում այդ մասին չէ խոսքը, այլ երկու կնոջ հետ ապրելը, այստեղից էլ՝ ընդհանուր առմամբ շնություն: Սակայն Տիրլբին, Ռիթթերը եւ Օտտոն սույն խոսքը վերագրում են ապահարզանից հետո երկրորդ ամուսնությանը՝ թույլատրելի ըստ հռոմեական օրենքների:*

[19] *Մատթ. Թ. 13:*

[20] *Մատթ. ե. 44:*

[21] *Ղուկ. Զ. 28:*

[22] *Մատթ. ե. 42:*

[23] *Ղուկ. Զ. 34:*

ժանգ չեն ոչնչացնում»[24]: «Ինչ օգուտ կունենա մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի: Կամ՝ մարդ իր անձի փոխարեն ինչ փրկանք պիտի տա»[25]: Այսպիսով՝ «գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց եւ ո՛չ ժանգ չեն ոչնչացնում»[26]: Եւ «Գթասի՛րտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է»[27]: «Քանի որ Նա Իր արեգակը ծագեցնում է չարերի եւ բարիների վրա»[28]: «Ձեր կյանքի համար հոգ մի՛ արեք, թե ինչ պիտի ուտեք կամ ինչ պիտի խմեք, եւ ոչ էլ ձեր մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք... Նայե՛ք երկնքի թռչուններին... ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց: Այսուհետեւ հոգ մի՛ արեք ու մի՛ ասեք՝ ինչ պիտի ուտենք կամ ինչ պիտի հագնենք... քանի որ ձեր երկնավոր Հայրը գիտե, թե այդ բոլորը ձեզ պետք է: Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը եւ Նրա արդարությունը, եւ այդ բոլորն Աստված ձեզ ավելիով կտա»[29]: «Քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ եւ ձեր սրտերը կլինեն»[30]: «Զգո՛ւշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջեւ չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց. այլապես վարձ չեք ընդունի Հորից, որ երկնքում է»[31]:

ԺԶ. Իսկ ահա թե ինչ է ասում անհիշաչար, բոլորի համար պատրաստակամ եւ ոչ բարկացկոտ լինելու համար. «Եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյուսն էլ դարձրու: Եւ եթե մեկը կամենա քեզ բռնադատել եւ քո շապիկն առնել, նրան քո բաճկոնն էլ թող: Ով զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի: Եւ եթե մեկը քեզ հարկադրի մի մղոն ճանապարհ անցնել, նրա հետ երկո՛ւսն էլ գնա: Թող այսպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաբանեն ձեր Հորը, որ երկնքում է»[32]: Մենք չպիտի վեճ ու կռիվ գրգռենք: Նա կամենում է, որ մենք վատ մարդկանց հետեւորդներ չլինենք ու հորդորում մեզ համբերությամբ եւ հեզությամբ հեռու տանել բոլորին ամոթալի գործերից ու առ չարը բուռն հակումներից: Ես այս

[24] *Մատթ. Զ. 19–20:*
[25] *Մատթ ԺԶ. 26:*
[26] *Մատթ. Զ. 20:*
[27] *Ղուկ. Զ. 36:*
[28] *Մատթ. Ե. 45:*
[29] *Մատթ. Ե. 25, 26, 31–33:*
[30] *Մատթ Զ. 21:*
[31] *Մատթ. Զ. 1:*
[32] *Մատթ. Ե. 39, 40, 22, 16:*

բանը կարող եմ ցույց տալ մեզանից շատերի օրինակով, որոնք, իրենց լկտիությունից ու վայրագությունից հեռանալով, փոխվեցին պարտվելով կամ այնու, որ ուշիուշով տեսան իրենց դրացիների խստաբարոյությունը, կամ այնու, որ տեսան, թե ինչ հրաշալի համբերությամբ են իրենց ուղեկիցները տանում վիրավորանքները, կամ փորձով ճանաչեցին իրենց հետ գործով շփվող մարդկանց բարքերը: Իսկ ամենեւին չերդվելու, այլ միայն ճիշտ խոսելու մասին Նա այս պատվիրանը տվեց. «Իսկ ես ձեզ ասում եմ ամենեւին չերդվել... Այլ ձեր խոսքը լինի՝ այոն՝ այո, եւ ոչը՝ ոչ, որովհետեւ դրանից ավելին չարից է»[33]: Ահա թե ինչպես է համոզիչ կերպով հորդորում պաշտել միայն Աստծուն. «Ամենից մեծ պատվիրանն է. «Քո Տեր Աստծուն պաշտիր եւ միայն Նրան ծառայիր քո ամբողջ սրտով եւ քո ամբողջ զորությամբ. Տեր Աստծուն, Որ ստեղծել է քեզ»[34]: Իսկ երբ ոմն մեկը մոտեցավ Նրան եւ ասաց. «Բարի Վարդապետ», Հիսուս ի պատասխան ասաց. «Բարի չէ ոչ ոք, այլ միայն՝ Աստված»[35]: Իսկ եթե գտնվեն այնպիսիք, ինպիսիք Քրիստոսի ուսմունքի համաձայն չեն ապրում, այդպիսիք, թող հայտնի լինի, քրիստոնյաներ չեն, այլ միայն լեզվով են հռլովում Քրիստոսի ուսմունքը, քանզի Նա ուսուցանում էր, որ խոսողները չէ, որ փրկվելու են, այլ նրանք, ովքեր գործեր կկատարեն: Նա այսպես ասաց. «Ոչ ամեն մարդ, որ ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի արքայություն կմտնի, այլ նա՛, ով կատարում է կամքն իմ Հոր, որ երկնքում է: Արդ, ով լսում է ինձ ու կատարում ասածս, նա լսում է ինձ առաքողին: Շատերն ինձ կասեն. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ Քո անունով մենք կերանք ու խմեցինք եւ հրաշքներ գործեցինք: Այնժամ ես նրանց կասեմ. «Հեռո՛ւ կացեք ինձանից դուք ամենքդ, որ անօրենություն եք գործում»[36]: «Եւ կգցեն նրանց բոցավառ հնոցի մեջ. այնտեղ կլինի լաց եւ ատամների կրճտում: Այն ժամանակ արդարները երկնքի արքայության մեջ կծագեն ինչպես արեգակը»[37], իսկ մեղավորները կգցվեն հավիտենական հրի մեջ: «Շատերը կգան իմ անունով՝ արտաքուստ ոչխարների զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են: Իրենց գործերից կճանաչեք նրանց: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տալիս, կտրվում եւ կրակն է նետվում»[38]: Իսկ

[33] *Մատթ. ե. 34, 37:*
[34] *Մարկ. ժԲ. 30:*
[35] *Մարկ. ժ. 17, 18:*
[36] *Մատթ. է. 21 եւ հաջորդ համարները:*
[37] *Մատթ. ԺԳ. 42, 43:*
[38] *Համմտ. Մատթ. է. 15, ԺՋ. 19:*

մենք խնդրում ենք, որ դուք էլ պատժեք նրանց, ովքեր չեն ապրում Նրա վարդապետության համեմատ, այլ միայն անունով են քրիստոնյաներ:

Ժէ. Մենք, որտեղ էլ որ լինենք, աշխատում ենք նախեւառաջ վճարել ձեր պաշտոնյաների կողմից կարգված հարկերն ու պարտիքները, քանզի այդպիսին է Նրա պատվիրանը: Մի անգամ Նրան մոտեցան ոմանք ու հարցրին, թե պետք է արդյոք կեսարին հարկ տալ, եւ Նա պատասխանեց. «Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է»: Նրանք ասացին՝ կայսրինը: Այն ժամանակ նրանց ասաց. «Գնացե՛ք, տվե՛ք կայսրինը՝ կայսեր, եւ Աստծունը՝ Աստծուն»[39]: Ուստի թեպետեւ պաշտում ենք մի ու միակ Աստծուն, բայց այլ առումներով ձեզ էլ ենք սիրահոժար ծառայում՝ իբրեւ արքաներ ու մարդկանց կառավարիչներ ընդունելով եւ ձեզ համար աղոթելով, որ թագավորելիս նաեւ սթափ դատողությամբ օժտված լինեք: Իսկ թե ուշադրություն չդարձնեք մեր աղոթքների եւ անթաքույց բացատրությունների վրա, մենք տուժած չենք լինի, քանզի հավատում ենք կամ, ավելի ճիշտ, լիովին համոզված ենք, որ ամեն մեկը, ըստ իր գործերի, հավիտենական կրակով կպատժվի, եւ ամեն մեկից, նրա համեմատ ինչ որ ստացել է Աստծուց, հաշվետվություն կպահանջվի, ինչպես որ Քրիստոսն է ասում. «Ում շատ է տրված, նրանից շատ էլ կուզվի»[40]: Նայե՛ք նախկին տիրակալներից յուրաքանչյուրի վախճանին. նրանք մահացան բոլորին հատուկ մահով: Եթե մահն անզգայության վիճակի մեջ դներ, ապա դա միմիայն բոլոր չարագործների համար շահեկան կլիներ: Բայց քանի որ բոլոր ապրածների համար զգացողությունները պահպանվում են, եւ բոլորին էլ վերահաս հավիտենական տառապանքներ են սպասում, ապա մի՛ վարանեք համոզվել ու հավատալ իմ խոսքերի ճշմարտացիությանը: Իսկապես էլ, թող ձեզ համոզեն անգամ մեռելահարցությունն ու չպղծված տղաների միջոցով կատարվող գուշակությունները[41], ոգեհարցությունն ու մոգերի մեջ հանդիպող այսպես կոչված քուն բերողներն ու պահապան-ոգիները՝ դրանով զբաղվող մարդկանց բոլոր գործողություններով

---

[39] Մատթ. ԻԲ. 17–21:

[40] Ղուկ. ԺԲ. 48:

[41] Ոմանք այս իրողությունը հասկանում են հենց նոր մահացած տղաների փորոտիքի զննումը, քանի որ ապագան իմանալու համար տղաների սպանության սովորությունը վկայել են Եւսեբիոսը (Պատմ. գր. է., 10), Սոկրատեսը (Գ. 13) եւ կեղծ-Կղեմեսը (Բ. 13): Սա, սակայն, կարելի է նաեւ վերագրել տղաներին ինչ-ինչ մարգարեություններ անելու դրդող մոգերի սովորությանը, ինչպես այդ մասին հայտնում է Տերտուղիանոսը. «Pueros in eloquium oraculi eliciunt» *(Ջատագովություն, գլ. 23):*

հանդերձ, որ հոգիները մահից հետո էլ պահպանում են զգացողությունները: Թող այս բանում ձեզ հավաստիացնեն այն մարդիկ՝ մեռյալների հոգիներով բռնվածներն[42] ու իրենց գետին գցողները՝ ընկճավորները, որոնց բոլորն այսահար կամ խելագար են անվանում, եւ այսպես կոչված պատգամախոսները՝ Ամփիլոքոսը, Դոդանեսը, Պիթիան եւ նրանց նմանները, ինչպես նաեւ մատենագիրների՝ էմպեդոկլեսի, Պյութագորասի, Պլատոնի, Սոկրատեսի ուսմունքներն ու հոմերական փոսը[43] եւ Ոդիսեւսի էջքը՝ մեռյալներին տեսնելու համար եւ նույն բանը պնդող այլոց կարծիքները: Լսեցե՛ք մեզ, համենայն դեպս, նրանց հավասար, քանզի նրանցից պակաս չէ մեր հավատն առ Աստված, նույնիսկ ավելին է, որովհետեւ հույս ունենք կրկին հետ ստանալ մեռյալներին եւ հող դարձած մեր մարմինները՝ պնդելով, որ Աստծու համար անհնարին ոչինչ չկա:

ԺԲ. Եթե մենք մարմին առած չլինեինք, եւ ոմն մեկը մեզ ասեր, որ մարդկային սերմի մի փոքրիկ կաթիլից կարող են միս ու ոսկոր եւ ջլեր առաջանալ, ինչպես որ տեսնում էլ ենք, ապա ինչը կարող էր ավելի անհավանական թվալ մտածող մարդու համար: Ենթադրություններով խոսենք: Դիցուք, դուք գոյություն չունեք ձեր այս ներկայիս տեսքով եւ չեք ծնվել ձեր ծնողներից: Եթե ոմն մեկը ձեզ ցույց տար մարդկային սերմն ու մարդու տեսքի պատկերը եւ պնդեր, որ հենց սրանից է առաջացել այս էակը, ապա մի՞թե, առանց այդ բանն իրականում տեսնելու, կհավատայիք նրա խոսքին: Ոչ ոք, կարծում եմ, չէր համարձակվի հերքել [որ ինքը չէր հավատա]: Նույն կերպ էլ ձեր անհավատությունը պայմանավորված է նրանով, որ դուք տակավին չեք տեսել հարություն առած մեռյալի: Սակայն ինչպես որ առաջ չէիք հավատա, թե մի փոքրիկ կաթիլից կարող էիք դառնալ այնպիսին, ինչպիսին որ եք, բայց, այնուամենայնիվ, տեսնում եք, որ այդպես լինում է, նույն կերպ էլ խորհեք, որ սերմերի նմանությամբ քայքայված ու հող դարձած մարդկային մարմինները կարող են, Աստծու կամոք, իր ժամանակին հարություն առնել եւ անապակություն հագնել: Չեմ կարող ասել, թե Աստծուն վայել ինչ զորություն են վերագրում Նրան, ովքեր ասում են, որ ամենայն բան կդառնա այն, ինչից որ ստեղծվել էր, եւ որ դրանից ավելին Ինքն Աստված այլեւս ոչինչ չի կարող անել, բայց տեսնում եմ, որ նրանք չէին հավատա, որ հնարավոր

[42] *Հուստինոսն այսպես ասում է ըստ հեթանոսների տեսակետի:*

[43] *Տե՛ս Հոմերոս, Ոդիսական, ԺԱ. 25:*

է նրանց համար երբեւիցե դառնալ այնպիսին, ինչպիսին տեսնում են Ճ եւ իրենց, Ճ եւ ողջ աշխարհը՝ այդպիսի նյութերից կազմված: Ուստի մենք գերադասում ենք հավատալ նաեւ նրան, ինչն անհնար է մեր բնության եւ մարդկանց համար, քան այլոց պես անհավատ լինել, քանզի գիտենք, որ մեր ուսուցիչ Հիսուս Քրիստոսն ասել է. «Մարդկանց համար այդ անկարելի է, բայց Աստծու համեն ինչ կարելի է»[44]: Նա նաեւ ասաց. «Եւ մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող, այլ դուք առավել վախեցե՛ք նրանից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին եւ մարմինը»[45]: Գեհենն այն վայրն է, որտեղ տանջվելու են մեղավոր կյանքով ապրողներն ու նրանք, ովքեր չկամեցան հավատալ, որ կկատարվի այն, ինչ Աստված մեզ սովորեցրեց Քրիստոսի միջոցով:

ԺԹ.[46] Ճ եւ Սիբիլլան, Ճ եւ Հիսթասպոսն ասում էին, որ աստվոր բաները հրո ճարակ կդառնան: Իսկ այսպես կոչված ստոիկյան փիլիսոփաները պնդում են, որ Ինքն Աստվածն էլ կրակի մեջ կանհետանա, եւ այդ փոփոխությունից հետո, ինչպես որ ասում են, նորից աշխարհ կառաջանա: Իսկ մենք կարծում ենք, որ Աստված՝ ամենայնի Արարիչը, գերիվեր է փոփոխական բաներից: Այսպես ուրեմն, եթե մենք պնդում ենք այն, ինչ համաձայն է ձեզանում հարգանք վայելող բանաստեղծների ու փիլիսոփաների հետ, իսկ մյուս կարծիքներն առավել ամբողջական ու առավել վայել են Աստծուն, քան նրանց կարծիքները, ընդ որում՝ միայն մենք ապացույցներ ունենք, ապա ինչո՞ւ են այդքան անարդարացիորեն մեզ բոլորից շատ ատում: Երբ ասում ենք, որ ամեն ինչ կարգավորված ու ստեղծված է Աստծու ձեռամբ, ապա պարզվում է, որ մենք արտահայտում ենք Պլատոնի տեսակետը. երբ ասում ենք, որ աշխարհը հրո ճարակ կդառնա, ապա մեր տեսակետը համահունչ է ստոիկների տեսակետին. իսկ երբ ուսուցանում ենք, որ մահից հետո չարագործների հոգիները, զգացողություններ ունենալով, կպատժվեն, իսկ բարի մարդկանց հոգիները՝ զերծ պատիժներից, երանության մեջ կապրեն, ապա ասում ենք այն, ինչ ասում են նաեւ փիլիսոփաները: Պնդելով, որ չի կարելի

---

[44] Մատթ. ԺԹ. 26:

[45] Մատթ. Ժ. 28:

[46] Ռուսերեն հրատարակությունում գլխահամարների հաջորդականության մեջ վրիպակ է սպրդել. ԺՀ. գլխին հաջորդում է Ի. գլուխը: Թարգմանության մեջ վերականգնել ենք հաջորդականությունը:*

երկրպագել մարդկանց ձեռքի գործերին՝ մենք ասում ենք այն, ինչ ասում էին Մենանդրոս[47] կատակերգակը եւ այլք, այն է՝ արվեստավորը գերիվեր է ստեղծագործությունից։

Ի. Եւ եթե ասում ենք, որ Բանը՝ Աստծու անդրանիկ Որդին՝ Հիսուս Քրիստոսը՝ մեր Ուսուցիչը, անարատ ծնունդ է, Որը խաչվել է, մահացել, իսկ հարություն առնելով՝ երկինք համբարձել, ապա ոչ մի տարբեր բան չենք ասում այն ամենից, ինչ դուք ասում եք Զեւսի՝ այսպես կոչված զավակների մասին։ Ձեզ հայտնի է, թե Զեւսը քանի որդի ուներ ըստ ձեզանում հարգանք վայելող հեղինակների։ Օրինակ՝ Հերմեսը՝ բոլորի ուսուցիչն ու մեկնողական խոսքը, կայծակնահար եղած եւ երկինք համբարձված Ասկլեպիոսը, որ նաեւ բժիշկ էր։ Բզկտված Դիոնիսոսը, Հերկուլեսը, որ չարչարանքներից խուսափելու համար իրեն կրակի մեջ էր նետել։ Լեդայից սերող Դիոսկուրյանները, Դանայայից կյանք առած Պերսեւսը եւ մարդկանցից ծնված Բելլերոփոնը, որը, Պեգասոս թեւավոր ձիու վրա, վեր էր խոյացել։ Այլեւս ինչ ասենք Արիադնեի եւ այլոց մասին, որոնք Արիադնեի պես տեղադրվել են աստղերի մեջ։ Այն էլ ասենք, թե ինչու եք դուք միշտ ցանկանում ձեր մահացող կայսրերին անմահացնել եւ մեջտեղ եք բերում ինչ-որ մարդու, որը երդվելով հավաստիացնում է, թե նա տեսել է՝ ինչպես է այրված կեսարը խարույկից երկինք հառնել[48]։ Իսկ թե ինչեր են պատմվում Զեւսի՝ այսպես կոչված զավակների գործերից, կարիք չունեմ այդ մասին գիտակների հետ խոսելու, միայն կասեմ, որ դրանք գրված են բարքերն ապականելու եւ ի վնաս ձեր պատանեկության, որովհետեւ բոլորը կարծում են, որ չաստվածներին ընդօրինակելը բարի գործ է։ Եւ թող ողջախոհ հոգուց վանվի չաստվածների մասին այսպիսի միտքը, այն է՝ հավատալ իբրեւ թե, ըստ իրենց խոսքի, Եւ ամենից գլխավորը, Եւ բոլորին ծնող Զեւսը հայրասպան էր ու իր նման հայրասպանի որդի եւ բուռն հակում ունենալով արատավոր ու զազրելի հաճույքների նկատմամբ՝ այցելում էր Եւ Գանիմեդեսին[49], Եւ բացում կանանց, որոնց հետ պոռնկանում էր, եւ իբրեւ թե նրա զավակներն էլ էին այդպիսի գոր-

---

[47]* Մենանդրոս *(Ք. ա. 342–291 թթ.) – Հին հունական կատակերգակ, աթենական նոր կատակերգության գլխավոր ներկայացուցիչ։*

[48] *Այս սովորույթի մասին վկայում է Սվետոնիոսն Օգոստոսի կենսագրությունում. առանձնակի սուր է ծաղրում այս սովորույթը Սենեկան (*Colocyntosis-*ում)։ Համմմ.* Տացիանոս, *Ընդդեմ հույների, գլ. 10,* Տերտուղիանոս, *Առ հեթանոսս, գլ. ժ. 11, գլ. է։*

[49]* *Գանիմեդեսը Տրովա արքայի որդին էր, արտակարգ գեղեցկության պատճառով Զեւսն արծվի կերպարանքով առեւանգում է նրան երկինք, ուր եւ դառնում է վերջինիս սիրելին ու մատուակը։*

ծեր անում: Դա, ինչպես եւ վերն ասացի, չար այսերն էին անում: Իսկ մենք գիտենք, որ անմահության կարժանանան միմիայն նրանք, ովքեր մոտենում են Աստծուն սուրբ կյանքով եւ առաքինությամբ: Մենք նաեւ հավատում ենք, որ ոչ բարեպաշտ կյանքով ապրողներն ու չապաշխարողները տանջանքների կմատնվեն հավիտենական հրում:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Ռուսերենից թարգմանեց եւ ծանոթագրեց
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ